Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
հուլիսի 27-ի նիստի N 32
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՇՈՒԿԱՅԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Գործողությունը	Գործողության նկարագրությունը	Կատարման ժամկետը	Պատաս-խանատու կառույցը	Վերստուգելի չափորոշիչ	Ֆինանսավոր-ման աղբյուրը
1.	Էներգետիկայի, Լիցենզավորման և Պետական տուրքի մասին ՀՀ օրենքների լրամշակում	1) ՀՀ ԷԵԲՊՆ համաձայնեցնելով ՀԾԿՀ-ի հետ մշակում է «Էներգետիկայի մասին», «Լիցենզավորման մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերը՝ հետևյալ գործողությունների ներառմամբ. **ա.** ՀՀ ԷԵԲՊՆ և ՀԾԿՀ գործառույթների հստակեցում, **բ.** ԷՄՄՇ աստիճանական ազատականացումը խթանող դրույթների ներառում, այդ թվում նկարագրելով հզորությունների, էլեկտրաէներգիայի ուղիղ	2017 հուլիսի երրորդ տասնօրյակ	ՀՀ ԷԵԲՊՆ, ՀԾԿՀ(համաձայնությամբ)	«Էներգետիկայի մասին», «Լիցենզավորման մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթի ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		պայմանագրերի, օր-առաջ և հաշվեկշռման շուկաները ու համակարգային ծառայությունները, **գ.** մատակարարման և բաշխման գործառույթների տարանջատում՝ դրանցից յուրաքանչյուրի համար սահմանելով առանձին լիցենզիաներ և կարգավորման դաշտ, **դ.** էլեկտրաէներգետիկական համակարգի և շուկայի օպերատորների լիազորությունների հստակեցում և ընդլայնում, **ե.** էլեկտրաէներգիայի արտահանման և ներկրման գործունեության կարգավորում առանց լիցենզավորման, **զ.** էլեկտրաէներգիայի մեծածախ առևտրի իրականացման համար նոր տիպի լիցենզիայի և կարգավորումների ներդրում, **է.** երրորդ կողմի մուտքի ոչ խտրական իրավունքը երաշխավորող դրույթների ներառում, այդ թվում էլեկտրական ցանցին նոր միացումների և ենթակառուցվածքների հասանելիության ապահովման առումով:				
		2) ՀՀ ԷԵԲՊՆ համագործակցելով ՀԾԿՀ-ի հետ մշակում է Էներգետիկայի մասին ՀՀ նոր օրենք՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև	2020 հուլիսի երրորդ տասնօրյակ	ՀՀ ԷԵԲՊՆ, ՀԾԿՀ(համաձայնությամբ)	«Էներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարության	

		ԷՇՄ և ԷԱՄ ներդման ընթացքում առաջ եկած խնդիրները:			քննարկմանը	
2.	Էլեկտրաէներգետիկ շուկայի օպերատորի ստեղծում և զարգացում	1) ՀԾԿՀ-ն համաձայնեցնելով ՀՀ ԷԵԲՊՆ հետ Հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման լիցենզիայի ունեցող անձին տրամադրում է նոր լիցենզիա՝ վերջինիս վերապահելով ԷԷՇՕ կարգավիճակ և նոր իրավասություններ ԷՄՄՇ առևտրի կազմակերպման համար, ներառյալ սակայն չսահմանափակվելով հետևյալով. **ա**. ԷՄՄՇ կազմակերպում և զարգացում, **բ**. ԷՄՄՇ մասնակիցների գրանցում, **գ**. ԷՄՄՇ մասնակիցների էլեկտրաէներգիայի առքի և վաճառքի հայտերի գրանցում և կառավարում, **դ**. ԷՄՄՇ գնված և վաճառված էլեկտրաէներգիայի քանակությունների հաշվառում և հաշիվների դուրս գրում, **ե**. հարևան երկրների ԷՄՄՇ հետ առևտրի կազմակերպում:	2017 հուլիսի երրորդ տասնօրյակ	ՀՀ ԷԵԲՊՆ, ՀԾԿՀ(համաձայնությամբ), ԷԷՇՕ	ՀԾԿՀ որոշման ընդունում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.	Էլեկտրաէներգետիկ համակարգի ցանցային կանոնների հաստատում և Էլեկտրաէներգետիկ համակարգի օպերատորի	1) ՀԾԿՀ-ն համաձայնեցնելով ՀՀ ԷԵԲՊՆ հետ հաստատում է ԷԷՀՕ կողմից ներկայացված՝ էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնները:	2017 հուլիսի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ(համաձայնությամբ), ՀՀ ԷԵԲՊՆ, ԷԷՀՕ	ՀԾԿՀ որոշման ընդունում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		2) ՀԾԿՀ-ն համաձայնեցնելով ՀՀ ԷԵԲՊՆ հետ, փոփոխություններ	2017 հուլիսի երրորդ	ՀԾԿՀ(համաձայնությամբ),	ՀԾԿՀ որոշման ընդունում	

	իրավասությունների շրջանակի ընդլայնում	է կատարում ԷԷՀՕ լիցենզիայի պայմաններում ընդլայնելով վերջինիս իրավասությունները էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոններով նախատեսված նոր գործառույթների իրականացման համար:	տասնօրյակ	ՀՀ ԷԵԲՊՆ, ԷԷՀՕ		
4.	Սակագների կառուցվածքի բարելավում	1) ՀԾԿՀ-ն բարելավում է բաշխման ծառայությունների մատուցման սակագների կառուցվածքը դրանց հաշվարկի ընթացքում հենվելով ըստ լարման մակարդակների սահմանվող սակագների հաշվարկի արդյունքների վրա, ինչպես նաև բաշխման ծառայությունների մատուցման սակագներում չներառելով էլեկտրաէներգիայի արտադրության պլանավորված և փաստացի ծավալների շեղումների պատճառով առաջացած վնասներն ու օգուտները և առաքված էլեկտրաէներգիայի դիմաց գումարների հավաքագրման ծառայությունների արժեքը:	2018 հունվարի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ(համաձայնությամբ)	ՀԾԿՀ որոշման ընդունում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		2) ՀԾԿՀ-ն բարելավում է վերջնական սպառողներին ըստ լարման մակարդակների սահմանվող էլեկտրաէներգիայի սակագների կառուցվածքը՝ սակագների հաշվարկի ընթացքում հենվելով տվյալ լարման մակարդակի սպառողներին էլեկտրական էներգիա բաշխելու համար անհրաժեշտ միջինացված ծախսերի	2019 հունվարի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ(համաձայնությամբ)	ՀԾԿՀ որոշման ընդունում	

		իրական մեծությունից:				
		3) ՀԾԿՀ-ն բարելավում է էլեկտրաէներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների կառուցվածքը՝ դրանցից յուրաքանչյուրի էլեկտրաէներգիայի և հզորության դրույքի հաշվարկման ընթացքում հնարավորինս մոտարկելով մաշվածության և շահույթի բաշխման մոտեցումները:	2018 հունվարի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ(համաձայնությամբ)	ՀԾԿՀ որոշման ընդունում	
		4) ՀԾԿՀ-ն որոշակիորեն բարձրացնում է էլեկտրաէներգիա արտադրող և էլեկտրաէներգետիկական շուկային ծառայություններ մատուցող ընկերությունների շահույթի նորման՝ բարելավելու վերջիններիս երկարաժամկետ առևտրային վարկեր ներգրավելու հնարավորությունը:	2019 հունվարի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ(համաձայնությամբ)	ՀԾԿՀ որոշման ընդունում	
		5) ՀԾԿՀ-ն ԷՄՄՇ մուտքի իրավունք ստացած բոլոր անձանց համար ներդնում է առանձնացված հզորության և էլեկտրաէներգիայի դրույքներ, ինչպես նաև սահմանում է համակարգային ծառայությունների սակագները՝ ըստ դրանց տիպերի:	2019 հուլիսի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ(համաձայնությամբ)	ՀԾԿՀ որոշման ընդունում	
5.	Էլեկտրաէներգետիկ շուկայի նոր մոդելին անցում	1) ՀԾԿՀ-ն համաձայնեցնելով ՀՀ ԷԵԲՊՆ հետ ԷՄՄՇ աստիճանական ազատականացման նպատակով հաստատում է ԷՄՄՇ ժամանակավոր կանոնները, որի շրջանակում.	2017 սեպտեմբեր երկրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ(համաձայնությամբ), ՀՀ ԷԵԲՊՆ	ՀԾԿՀ որոշման ընդունում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		ա. որոշում է ԷՄՄԾ կարգավորվող շուկայից դուրս՝ ուղիղ պայմանագրերով էլեկտրաէներգիա վաճառելու և գնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, **բ**. որոշում է հաշվեկշռման մեխանիզմը, **գ**. որոշում է էլեկտրաէներգիայի հաշվառման և հաշվիների դուրս գրման կանոնները, **դ**. որոշում է մինչև ԷՄՄԾ ազատականացումը կարգավորվող ԷՄՄԾ-ից ելքի և մուտքի ընթացակարգը:				
		2) ԷԷԾՕ-ն ԷՄՄԾ նոր կանոնների մշակման համար շուկայի օպտիմալ կառուցվածքի մոդելավորման ծրագրային ապահովման փաթեթի միջոցով իրականացնում է համապատասխան հաշվարկներ և համագործակցելով ԷԷՀՕ ու էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակցիների հետ մշակում է Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելի (ԷՇՄ) և էլեկտրաէներգետիկական շուկայի առևտրի նոր մեխանիզմների (ԷԱՄ) հայեցակարգերը ներկայացնելով այն ՀՀ ԷԵԲՊՆ և ՀԾԿՀ հաստատմանը: Նոր ԷՇՄ և ԷԱՄ հայեցակարգերը առնվազն պետք է. **ա**. ապահովեն խոշոր սպառողների,	2018 փետրվարի առաջին տասնօրյակ	ՀՀ ԷԵԲՊՆ, ՀԾԿՀ(համաձայնությամբ), ԷԷԾՕ, ԷԷՀՕ	ՀԾԿՀ որոշման ընդունում	

		մատակարարների, էլեկտրաէներգիայի մեծածախ առևտրով զբաղվողների մուտքը ԷՄՄՇ, ինչպես նաև հնարավորություն ընձեռեն արտահանել տվյալ պահին ԷՄՄՇ-ում պահանջարկ չունեցող էլեկտաէներգիան, **բ.** ներկայացնեն ԷՄՄՇ մասնակիցների միջև պատասխանատվության բաշխման մեխանիզմները, **գ.** ապահովեն ամբողջական անցումը էլեկտրաէներգիայի ժամային առևտրի սկզբունքին, **դ.** ներկայացնեն հզորությունների, ուղիղ պայմանագրերի, օր-առաջ և հաշվեկշռման շուկաներն ու համակարգային ծառայությունները, **ե.** ապահովեն էլեկտրաէներգիա արտադրող կայանների իրավունքը՝ առաքվող էլեկտրաէներգիայի որոշ չափաքանակ կարգավորվող գներից ավելի բարձր գներով վաճառելու համար:				
		3) ՀԾԿՀ-ն համաձայնեցնելով ՀՀ ԷԵԲՊՆ հետ, հաշվի առնելով ԷԷՇՕ կողմից ներկայացված առաջարկությունները հաստատում է ԷՇՄ և ԷԱՄ հայեցակարգերը՝ ապահովելով 5.2 կետում ներկայացված պարտադիր պահանջների կիրառումը:	2018 հուլիսի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ(համաձայնությամբ), ՀՀ ԷԵԲՊՆ, ԷԷՇՕ, ԷԷՀՕ	ՀԾԿՀ որոշման ընդունում	

		4) ԷԷՇՕ գործարկում է ԷՇՄ և ԷԱՄ ներդրման համար ընտրված ծրագրային ապահովման փաթեթը և սկսում է դրա փորձնական կիրառումը՝ առանց էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների համար ֆինանսական պատասխանատվության կիրառման:	2019 հունվարի երրորդ տասնօրյակ	ՀՀ ԷԵԲՊՆ, ՀԾԿՀ(համաձայնությամբ), ԷԷՇՕ, ԷԷՀՕ	ՀԾԿՀ որոշման ընդունում	
		5) ՀԾԿՀ-ն համաձայնեցնելով ՀՀ ԷԵԲՊՆ հետ և հաշվի առնելով ԷԷՇՕ կողմից ներկայացված առաջարկությունները, ԷՇՄ և ԷԱՄ հայեցակարգերին համապատասխան, հաստատում է ԷՄՄՇ նոր կանոնները և անցում է կատարում էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելին՝ շուկայի մասնակիցների համար ֆինանսական պատասխանատվության կիրառմամբ:	2019 հուլիսի երրորդ տասնօրյակ ,	ՀԾԿՀ(համաձայնությամբ), ՀՀ ԷԵԲՊՆ, ԷԷՇՕ, ԷԷՀՕ	ՀԾԿՀ որոշման ընդունում	
6.	Բաշխման և մատակարարման գործառույթների տարանջատում	1) ՀԾԿՀ-ն ներդնում է նոր ֆինանսական հաշվետվությունների համակարգ ԷԲՑՕ կողմից կատարվող ծախսերը բաշխման և մատակարարման գործառույթների միջև հստակ տարանջատելու նպատակով:	2018 հունվարի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ(համաձայնությամբ), ԷԲՑՕ	ՀԾԿՀ որոշման ընդունում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		2) ՀԾԿՀ-ն համաձայնեցնելով ՀՀ ԷԵԲՊՆ հետ հաստատում է. **ա**. բաշխման համակարգի ցանցային	2019 հուլիսի երրորդ տասնօրյակ	ՀԾԿՀ(համաձայնությամբ), ՀՀ ԷԵԲՊՆ,	ՀԾԿՀ որոշման ընդունում	

		կանոնները, **բ**. Էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնները, **գ**. Էլեկտրաէներգիայի բաշխման ծառայությունների մատուցման նոր պայմանագրի օրինակելի ձևը, **դ**. Էլեկտրաէներգիայի մատակարարման նոր պայմանագրի օրինակելի ձևը:		ԷԷՇՕ, ԷԲՑՕ		
7.	Հեռանկարային զարգացման նոր ծրագրի մշակում	1) ԷԷՀՕ համաձայնեցնելով ՀՀ ԷԵԲՊՆ, ՀԾԿՀ, պետական այլ գերատեսչությունների ու շագարգիռ կողմերի, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների հետ մշակում է Հայաստանի էներգետիկական համակարգի նոր հեռանկարային զարգացման ծրագիրը՝ հաջորդ տասնամյա ժամանակահատվածի համար:	2021 հուլիսի երրորդ տասնօրյակ	ՀՀ ԷԵԲՊՆ, ՀԾԿՀ(համաձայնությամբ), ԷԷՀՕ	ՀՀ ԷԵԲՊՆ նախարարի հրամանի ընդունում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԷԱՄ	Էլեկտրաէներգիայի առևտրի մեխանիզմ
ԷԲՑՕ	Էլեկտրաէներգիայի բաշխման ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձ
ԷԷՀՕ	Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձ
ԷԷՇՕ	Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձ
ԷՄՄՇ	էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկաներ
ԷՇՄ	Էլեկտրաէներգետիկական շուկայի մոդել
ՀՀ ԷԵԲՊՆ	Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
ՀԾԿՀ	Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով